USAID
FROM THE AMERICAN PEOPLE

IFES · 30 Years · INTERNATIONAL FOUNDATION FOR ELECTORAL SYSTEMS

ცესკო
საქართველოს საარჩევნო ადმინისტრაცია

საარჩევნო სისტემების განვითარების, რეფორმებისა და
სწავლების ცენტრი

# Հուշաթերթ-հրահանգ

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը

Հուշաթերթ-հրահանգը նախատեսված է այն ընտրական տեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ:

არჩევნები 2024

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից։

Փաստաթուղթն օժանդակ ռեսուրս է և նպատակ է նախանշում նպաստել քվեարկության օրը հանձնաժողովի քարտուղարի՝ կազմակերպված և հետևողական գործունեության ծավալմանը։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունների և գործունեության կարգի հետ կապված օրենսդրական կարգավորումներին ամբողջական տեսքով ծանոթանալու համար տե՛ս «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքը և «Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգը» (հաստատվել է ԿԸՀ 2024 թվականի օգոստոսի 16-ի N35/2024 որոշումով)։

## Ժամը 6:45-ից

- ☐ Բացե՛ք գործավարության մատյանը և առաջին էջում գրանցե՛ք տեղամասը բացելիս ընտրատեղամասում ներկա գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անուններն ու ազգանունները (նշելով նրանց ընտրող/նշանակող սուբյեկտներին): Հանձնաժողովի անդամները գործավարության մատյանում ստորագրությամբ հաստատում են իրենց գրանցումը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

**№ 112 საარჩევნო ოლქი** **№112.07** **საარჩევნო უბანი**

**საარჩევნო უბნის გახსნისას კენჭისყრის შენობაში ყოფნის უფლების მქონე პირები**

| № | სახელი, გვარი | სტატუსი | წარმდგენის დასახელება | ხელმოწერა |
|---|---|---|---|---|
| 1 | ნინო ნინოშვილი | თავმჯდომარე | საოლქო საარჩევნო კომისია | ნ. ნინოშვილი |
| 2 | გიორგი გიორგაძე | მოადგილე | საოლქო საარჩევნო კომისია | გ. გიორგაძე |
| 3 | დავით დავითულიანი | მდივანი | საოლქო საარჩევნო კომისია | დ. დავითულიანი |
| 4 | ინა ინაშვილი | კომისიის წევრი | საოლქო საარჩევნო კომისია | ი. ინაშვილი |
| 5 | სალომე სოლომონიძე | კომისიის წევრი | პოლიტიკური პარტია 111 | ს. სოლომონიძე |
| 6 | თოინ თოინიშვილი | კომისიის წევრი | პოლიტიკური პარტია 112 | თ. თოინიშვილი |
| 7 | მელა მელაშვილი | კომისიის წევრი | პოლიტიკური პარტია 113 | მ. მელაშვილი |
| 8 | სვენ ფასტერდინგი | საერთ. დამკვირვებელი | საერთაშორისო ორგანიზაცია | s. fasterding |
| 9 | ცოცნე დევდარიანი | მედია | ტელევიზია „ნათელი მზერა" | ც. დევდარიანი |
| 10 | გიორგი ბერიძე | ადგილ. დამკვირვებელი | ააიპ „მომავლის იმედი" | გ. ბერიძე |
| 11 | ნუცა ყოლოცაძე | სუბიექტის წარმომადგენელი | პოლიტიკური პარტია 119 | ნ. ყოლოცაძე |

- ☐ Ուշադրությո՛ւն դարձրեք, որ հանձնաժողովի բոլոր անդամները կրեն հատուկ համազգեստ և իրենց ինքնությունը և կարգավիճակն արտացոլող կրծքանշան:
- ☐ Ստուգե՛ք ընտրատեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց կրծքանշանի ժամկետը և դրա վրա նշված կարգավիճակը: Ստուգման արդյունքների նախատեսմամբ, գործավարության մատյանի առաջին էջում, անհրաժեշտության դեպքում՝ 2-րդ և 10-րդ էջերում գրանցե՛ք քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց անուններն ու ազգանունները (նշելով նրանց ներկայացնող կազմակերպությունը/ընտրական սուբյեկտին): Նշված անձինք գործավարության մատյանում գրանցումը հաստատում են ստորագրությամբ:
- ☐ Քվեարկության շենք մուտք գործելու պայմաններին չհամապատասխանելու դեպքում անձին ցուցո՛ւմ տվեք լքել քվեարկության շենքը:

☐ Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման արդյունքները, որոնք արտացոլված են տվյալ գործառույթը բաշխելու համար մինչև քվեարկության օրը կայացած վիճակահանության արդյունքների ակտում, գրանցե՛ք գործավարության մատյանի 3-րդ էջում:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

კენჭისყრის დაწყებამდე საუბნო საარჩევნო კომისიისა და სპეცჯგუფის წევრთა შორის წილისყრით ფუნქციათა განაწილების შედეგები

| № | კომისიის/სპეცჯგუფის წევრის ფუნქცია | კომისიის/სპეცჯგუფის წევრის სახელი, გვარი | კომისიის/სპეცჯგუფის წევრის ხელმოწერა |
|---|---|---|---|
| 1. | I გადასატანი საარჩევნო ყუთის წამღები | დოდო დოლიძე | დ. დოლიძე |
| 2. | I გადასატანი საარჩევნო ყუთის წამღები | თამარ თათულაშვილი | თ. თათულაშვილი |
| 3. | II გადასატანი საარჩევნო ყუთის წამღები | ცაცო ცაცურაშვილი | ც. ცაცურაშვილი |
| 4. | II გადასატანი საარჩევნო ყუთის წამღები *(სპეცჯგუფი)* | ჯილდა ქამაიძე | ჯ. ქამაიძე |
| 5. | II გადასატანი საარჩევნო ყუთის წამღები *(სპეცჯგუფი)* | ვიოლა აბაშიძე | ვ. აბაშიძე |
| 6. | ამომრჩეველთა ნაკადის მომწესრიგებელი | ნიკოლოზ აბაშიძე | ნ. აბაშიძე |
| 7. | I რეგისტრატორი | ინა ინაშვილი | ი. ინაშვილი |
| 8. | II რეგისტრატორი | ლალი ლალიაშვილი | ლ. ლალიაშვილი |
| 9. | III რეგისტრატორი | დავით დავითაძე | დ. დავითაძე |
| 10. | IV რეგისტრატორი | ნიკოლოზ ნიკვაშვილი | ნ. ნიკვაშვილი |

☐ Գործավարության մատյանի 5-րդ էջում նշե՛ք հանձնաժողովի անդամին շնորհված գործառույթի ժամանակավոր փոխանցումը մեկ այլ անդամի՝ նշելով ժամանակը: Գործառույթի փոխանցման փաստը հանձնաժողովի անդամին հաստատե՛լ տվեք ստորագրությամբ:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

საუბნო საარჩევნო კომისიის წევრთა შორის წილისყრით დადგენილ ფუნქციათა დროებით სხვა წევრზე გადაცემის შესახებ ინფორმაცია

| № | კომისიის წევრის სახელი, გვარი | კომისიის წევრის ფუნქცია | ფუნქციის დროებითი შემსრულებელი კომისიის წევრის სახელი, გვარი | ფუნქციის დროებით გადაცემის დრო (სთ. წთ.) | ფუნქციის დაბრუნე-ბის დრო (სთ. წთ.) | ხელმოწერა |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ლალი ლალიაშვილი | რეგისტრატორი | ნანა ნანიაშვილი | 19:45 | 20:00 | ლ. ლალიაშვილი |

- Հանձնաժողովի հատուկ կնիքի համարը նշե՛ք 9-րդ էջում:
- Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում գրանցե՛ք ստացված քվեաթերթիկների թիվը, ինչպես նաև ընտրողների թիվը՝ ըստ միասնական ցուցակի, ինչպես նաև ըստ շարժական քվեատուփի ցուցակի (եթե այդպիսիք կան):

  Հատուկ ցուցակում ընտրողների թիվը քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում գրանցե՛ք քվեարկության ավարտից հետո:
- Պահե՛ք ստուգման սարքերից տպված նախնական հաշվետվության հաստատման կտրոնները (հաստատվում է, որ ոչ մի ընտրող չի ստուգվել սարքերի կողմից):
- Քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում ցուցադրական արձանագրության հետ փակցրե՛ք ստուգման սարքից տպված ընտրացուցակը:
- Հանձնաժողովի նախագահի հետ ստորագրե՛ք ձայների հաշվման հատուկ սարքերից տպագրված «զրոյական քաղվածքի» կտրոնները և պահե՛ք նշված փաստաթղթերը:
- Գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցե՛ք քվեատուփերի անհատական կապարակնիքների համարները և կապարակնքման ճշգրիտ ժամանակը: Նույն էջում հանձնաժողովի նախագահի հետ ստորագրությամբ հաստատե՛ք դատարկ քվեատուփերի կապարակնքումը և այն տեղեկությունը, որ ձայների հաշվման հատուկ սարքերով ոչ մի ընտրող չի քվեարկել:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

| საარჩევნო ყუთების დალუქვის მონაცემები | | |
|---|---|---|
| საარჩევნო ყუთების დალუქვის დრო | 07 სთ. 30 წთ. | |
| I ძირითადი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები | 1234567 1234569<br>1234568 1234562 | 1234560 |
| II ძირითადი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები | 1244567 6234569<br>1434568 4234562 | 1254460 |
| I გადასატანი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები | 123456 153456 | |
| II გადასატანი საარჩევნო ყუთის ლუქების ნომრები | 123476 153476 | |
| *დალუქული ყუთები ცარიელია და დალუქვის მომენტისათვის ხმის მიცემის აპარატის საშუალებით არცერთ ამომრჩეველს არ მიუცია ხმა* | | |
| კომისიის თავმჯდომარე ნ. ნანიაშვილი (ხელმოწერა) | კომისიის მდივანი ვ. ვითოვაძე (ხელმოწერა) | |

- Գործավարության մատյանի 3-րդ էջում գրանցե՛ք ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները զետեղելու համար նախատեսված անթափանց արկղերի կապարակնիքների անհատական համարները՝ այն գրանցում իրականացնողների տվյալներով (անուն, ազգանուն), որոնց փոխանցել եք տուփերը: Տուփի ստացումը ստորագրությամբ հաստատում է համապատասխան գրանցում իրականացնողը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

| ვერიფიკაციის აპარატიდან ამობეჭდილი ამომრჩევლების ვერიფიკაციის დამადასტურებელი ქვითრების მოსათავსებლად განკუთვნილი ყუთის/ყუთების დალუქვის მონაცემები/ყუთის მიღების დადასტურება | | | |
|---|---|---|---|
| კომისიის წევრის ფუნქცია | ლუქების ნომრები | სახელი და გვარი | ხელმოწერა |
| I რეგისტრატორი | 121212 121215 | ნიკოლოზ ნიკვაშვილი | ნ. ნიკვაშვილი |
| II რეგისტრატორი | 121113 121116 | ზვიად ზვიადაძე | ზ. ზვიადაძე |
| III რეგისტრატორი | 111214 111217 | სალომე სოლომონიძე | ს. სოლომონიძე |
| IV რეგისტრატორი | 721215 221215 | თოინ თოინიშვილი | თ. თოინიშვილი |
| V რეგისტრატორი | | | |

## Ժամը 08:00-ից քվեարկության գործընթացի ժամանակ նկատի՛ ունեցեք

Եթե նշմարման ստուգման ժամանակ պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրա ով լինելը նշե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

Եթե ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը համարվի իրար անհամապատասխան, քվեարկության օրվա գործավարության մատյանի 29-31-րդ էջերում պետք է գրանցեք համապատասխան տվյալները և հաստատեք ստորագրությամբ: Գործավարության մատյանին պետք է կցեք Ձեր կողմից ստորագրությամբ հաստատված ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Եթե ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական

խոտանով, նման դեպքում լրացնում եք ընտրողի ստուգումը հաստատող ակտ, որում պետք է գրանցեք համապատասխան ընտրողի տվյալները: Ընտրողը ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրում է տվյալ ակտը, Գործավարության մատյանին կցե՛ք տվյալ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Այն դեպքում, եթե անհնար լինի ընտրողների ստուգման/ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերով շարունակել քվեարկության գործընթացը, առանց համապատասխան սարքի/սարքերի կիրառման քվեարկությունը շարունակելու մասին ակտ կազմե՛ք (ստորագրում են հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները)և համապատասխան գրառում կատարե՛ք գործավարության մատյանի 32-րդ էջում:

Քվեարկության գործընթացն առանց ընտրողների ստուգման սարքի օգտագործման շարունակելու դեպքում առաջնորդվե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգի N2 հավելվածով, էջ 71-79:

Քվեարկության գործընթացը առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի կիրառման շարունակելու դեպքում առաջնորդվե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգի N2 հավելվածով, էջ 79-81:

## Ժամը 09:00-ից

- ☐ Գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցե՛ք շարժական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին փոխանցված քվեաթերթիկների և շրջանակ-ծրարների քանակը, ինչպես նաև շարժական քվեատուփը ընտրատեղամասից տանելու ժամանակը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

გადასატანი საარჩევნო ყუთის თანმხლები კომისიისა და სპეცჯგუფის წევრთათვის გადაცემული საარჩევნო დოკუმენტაციის აღრიცხვა

| | დასახელება | რაოდენობა | | |
|---|---|---|---|---|
| | | I ყუთი | II ყუთი | III ყუთი |
| 1 | ამომრჩეველთა რაოდენობა გადასატანი საარჩევნო ყუთის სიაში | 35 | 15 | |
| 2 | გადაცემული ბიულეტენების რაოდენობა | 34 | 14 | |
| 3 | გადაცემული სპეციალური ჩარჩო-კონვერტების რაოდენობა | 35 | 15 | |
| 4 | გამოუყენებელი ბიულეტენების რაოდენობა | | | |
| 5 | *გადასატანი საარჩევნო ყუთის სიაში ხელმოწერების რაოდენობა* | | | |
| 6 | უბნიდან **წაღების** დრო | 09 სთ. 30 წთ. | 09 სთ. 30 წთ. | ___სთ. ___ წთ. |
| | უბანში **დაბრუნების** დრო | ___სთ. ___ წთ. | ___სთ. ___ წთ. | ___სთ. ___ წთ. |

## Ժամը 12:00

- ☐ Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը գրանցե՛ք գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ:

## Ժամը 17:00

- ☐ Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը գրանցե՛ք գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ:

## Մինչև 20:00

- ☐ Շարժական քվեատուփը ընտրատեղամաս վերադարձնելուն պես ստուգե՛ք շարժական քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների, չօգտագործված կամ/և փչացված քվեաթերթիկների թվի ճշտությունը: Անճշտության հայտնաբերման դեպքում շարժական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները պետք է բացատրագիր գրեն՝ պատճառի մատնանշմամբ:

  Բացատրագրում արտացոլված տվյալները նախատեսվում են համապատասխան քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների քանակը որոշելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու նպատակների համար:

- ☐ Գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցե՛ք ընտրողների ստորագրությունների թիվը շարժական քվեատուփի ցուցակում, չօգտագործված քվեաթերթիկների թիվը, ինչպես նաև ընտրական տեղամաս շարժական քվեատուփի վերադարձման ժամանակը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

გადასატანი საარჩევნო ყუთის თანმხლები კომისიისა და სპეცჯგუფის წევრთათვის გადაცემული საარჩევნო დოკუმენტაციის აღრიცხვა

| | დასახელება | რაოდენობა | | |
|---|---|---|---|---|
| | | I ყუთი | II ყუთი | III ყუთი |
| 1 | ამომრჩეველთა რაოდენობა გადასატანი საარჩევნო ყუთის სიაში | 35 | 15 | |
| 2 | გადაცემული ბიულეტენების რაოდენობა | 37 | 17 | |
| 3 | გადაცემული სპეციალური ჩარჩო-კონვერტების რაოდენობა | 35 | 15 | |
| 4 | გამოუყენებელი ბიულეტენების რაოდენობა | 2 | 2 | |
| 5 | *გადასატანი საარჩევნო ყუთის სიაში ხელმოწერების რაოდენობა* | 35 | 15 | |
| 6 | უბნიდან **წაღების** დრო | 09 სთ. 30 წთ. | 09 სთ. 30 წთ. | ___სთ. ___ წთ. |
| | უბანში **დაბრუნების** დრო | 17 სთ. 45 წთ. | 16 სთ. 40 წთ. | ___სთ. ___ წთ. |

## Ժամը 20:00-ից մինչև հիմնական քվեատուփը բացելը

- ☐ Գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցե՛ք ժամը 20:00-ի դրությամբ հերթում կանգնած ընտրողների թիվը (այսպիսինի առկայության դեպքում):

- ☐ Քվեարկությունն ավարտվելուց անմիջապես հետո գործավարության մատյանի 26-րդ, 27-րդ էջերում գրանցե՛ք ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները (ընտրող/նշանակող սուբյեկտների և կոնտակտային հեռախոսահամարների նշմամբ), ինչպես նաև, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց անունները, ազգանունները (ներկայացնող կազմակերպության կամ ընտրական սուբյեկտի և կոնտակտային հեռախոսահամարի նշմամբ): Նշված անձինք գրանցումը գործավարության մատյանում հաստատում են ստորագրությամբ:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

ხმების დათვლის დროს კენჭისყრის შენობაში მყოფ პირთა მონაცემები

| № | სახელი, გვარი | სტატუსი | წარმდგენის დასახელება | ტელეფონი | ხელმოწერა |
|---|---|---|---|---|---|
| 1 | ნინო ნინოშვილი | თავმჯდომარე | საოლქო საარჩევნო კომისია | 551526936 | ნ. ნინოშვილი |
| 2 | გიორგი გიორგაძე | მოადგილე | საოლქო საარჩევნო კომისია | 558956321 | გ. გიორგაძე |
| 3 | დავით დავითყლია | მდივანი | საოლქო საარჩევნო კომისია | 599896523 | და. დავითყლია |
| 4 | სალომე სოლომონიძე | კომისიის წევრი | პოლიტიკური პარტია III | 598784631 | ს. სოლომონიძე |
| 5 | გიორგი ბერიძე | ადგილ. დამკვირვებელი | ააიპ „მომავლის იმედი" | 599814523 | გ. ბერიძე |
| 6 | ნუცა ყორცაძე | საერთაშ. წარმომადგენელი | პოლიტიკური პარტია 119 | 571120595 | ნ. ყორცაძე |

- ☐ Պահե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից տրված ստուգող սարքից տպված քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվաքանակն արտացոլող վերջնական կտրոնը/հաշվետվությունը:

- ☐ Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական քանակը գրանցե՛ք քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում:

- ☐ Այն դեպքում, եթե շարժական քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում լինի սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ կամ ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքը վերադարձնի շարժական քվեատուփից հանված քվեաթերթիկը, փաստի հետ կապված կազմե՛ք ակտ, որը հանձնաժողովի նախագահի հետ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները և հատուկ խմբի անդամները (այսպիսինի առկայության դեպքում): Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմած ակտը պահե՛ք գործավարության մատյանում:
- ☐ Եթե շարժական քվեատուփի մեջ հայտնաբերվի այլ ընտրական տեղամասի համար հատկացված կամ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, դրանց քանակը չի նշվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ և նշվում է միայն գործավարության մատյանում:
- ☐ Հանձնաժողովի նախագահի հետ ստորագրե՛ք հատուկ էլեկտրոնային սարքից տպված նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքը: Քաղվածքը վավերացվում է հանձնաժողովի կնիքով: Քաղվածքի մեկ օրինակը պահվում է գործավարության մատյանում, մյուս օրինակը փակցվում է հանրային ծանոթացման համար: Բացի այդ, նախնական արդյունքների քաղվածքի հետ մեկտեղ տեսանելի տեղում պետք է փակցվի տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված ակտի վավերացված պատճենը (այսպիսինի առկայության դեպքում), որը կազմվել է շարժական քվեատուփից քվեաթերթիկները հիմնական քվեատուփի մեջ զետեղման գործընթացում բացահայտված հանգամանքների պատճառով:

Գործավարության մատյանի 3-րդ էջում գրանցե՛ք.

- ✓ հանձնաժողովի անդամների միջև հաշվողների գործառույթների բաշխման արդյունքները,
- ✓ վիճակահանությամբ որոշված ընտրական սուբյեկտների այն ներկայացուցիչների տվյալները, որոնք հաշվողների հետ մասնակցում են վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին,
- ✓ դիտորդների կողմից որոշված վերահսկողների տվյալները:

| ხმების დათვლის პროცედურისთვის საუბნო საარჩევნო კომისიის წევრთა შორის წილისყრით ფუნქციათა განაწილების შედეგები | | | |
|---|---|---|---|
| № | კომისიის წევრის ფუნქცია | კომისიის წევრის სახელი, გვარი | კომისიის წევრის ხელმოწერა |
| 1. | I მთვლელი | ინა ინაშვილი | ი. ინაშვილი |
| 2. | II მთვლელი | ლალი ლალიაშვილი | ლ. ლალიაშვილი |
| 3. | III მთვლელი | დავით დავითაძე | დ. დავითაძე |
| 4. | IV მთვლელი | ნიკოლოზ ნიკვაშვილი | ნ. ნიკვაშვილი |

| ფუნქცია | სახელი, გვარი |
|---|---|
| ნამდვილი ან/და ბათილი საარჩევნო ბიულეტენების დათვლის პროცესში მონაწილე **2 წარმომადგენელი** | ნათლო ნანანაძე |
| | დავით დევდარიანი |
| **2 მეთვალყურე**, რომელიც აკვირდება დათვლის მთელ პროცედურას | გიორგი ბერიძე |
| | ნიკოლოზ გელაშვილი |

- ☐ Մինչև հիմնական քվեատուփը բացելը  կապարակնքման նպատակով, առանձին-առանձին փաթեթների մեջ տեղադրե՛ք.
  - ✓ շարժական քվեատուփի ցուցակը (այսպիսինի առկայության դեպքում),
  - ✓ փասված քվեաթերթիկները,
  - ✓ գրանցում իրականացնողների մոտ եղած չօգտագործված քվեաթերթիկները (մինչև փաթեթի մեջ զետեղելը հանձնաժողովի քարտուղարը կտրում է տվյալ քվեաթերթիկների անկյունը):

  Յուրաքանչյուր փաթեթի վրա նշե՛ք ընտրատարածքի անվանումը և համարը, ընտրական տեղամասի անվանումը և համարը, ընտրական փաստաթղթի տեսակը:

- ☐ Հաշվառե՛ք այն դեպքերի թիվը, որոնք վերաբերում են ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարների անհամապատասխանությանն իրար, նաև գործավարության մատյանին կցված փաստաթղթերի քանակը (տվյալները գրանցե՛ք գործավարության մատյանում): Կապարակնքե՛ք տվյալ փաստաթղթերը, կնքված փաթեթի վրա նշե՛ք ընտրական տեղամասի անվանումը, համարը, փաստաթղթերի տեսակը և ստորագրե՛ք:

## Քվեատուփը բացելը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը

- Հանձնաժողովի նախագահի հետ ստուգե՛ք տվյալների ճշգրտությունը. եթե ընտրական սուբյեկտների կողմից ստացված ձայների և անվավեր քվեաթերթիկների գումարն ավել է քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թվից, հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է տալիս կրկին հաշվել տվյալները:
- Քվեաթերթիկները հաշվելու արդյունքները գրանցե՛ք գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ:
- Ձայները հաշվելու գործընթացն ավարտվելուց հետո, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ, լրացրե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը վավերացրե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը գրանցե՛ք գրանցամատյանի ելից փաստաթղթերի մասում:

## Արձանագրությունը կազմելիս նկատի՛ ունեցեք:

N3, N4, N5, N6 սյունակներում, ինչպես նաև սուբյեկտներին տրված ձայների քանակի սյունակներում տրված չորս բաժանմունքանոց վանդակներից չորրորդ (վերջին) վանդակում գրանցե՛ք միավորների կարգի թվանշանը, երրորդ վանդակում՝ տասնավորների կարգի թվանշանը, երկրորդ վանդակում՝ հարյուրավորների կարգի թվանշանը, առաջին վանդակում՝ հազարավորների կարգի թվանշանը:

Եթե համապատասխան տվյալների սյունակում մնա դատարկ վանդակ/վանդակներ, պարտադիր է, որ դատարկ վանդակում/վանդակներում մուտքագրե՛ք «X» խորհրդանշանը:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ պետք է նշել դրա կազմման ամսաթիվը և ժամը (ժամը և րոպեն):

Նմուշ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունից

შედგენის თარიღი - "26" 10 2024 წ., დრო: 21 საათი 45 წუთი, კომისიის ბეჭდის ნომერი 11207

## Արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ տեղ գտած տվյալներում ուղղումներ կատարել:

Եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության N3, N4, N5, N6 սյունակներում, ինչպես նաև թեկնածուներին տրված ձայների քանակի սյունակներում տվյալներ մուտքագրելիս սխալ է թույլ տրվել, սխալն ուղղելու համար քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ համապատասխան տվյալների երկայնքով արե՛ք գրառում «Ուղղված է» և հանձնաժողովի նախագահի հետ կազմե՛ք ուղղման արձանագրություն:

Ուղղման արձանագրությունը գրանցե՛ք գրանցամատյանի եղից փաստաթղթերի մասում և քվեարկության օրվա գործավարության մատյանում: Ուղղման արձանագրությունը կցվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը կապարակնքելուց և հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրումից հետո արգելվում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն ուղղելու արձանագրություն կազմել:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության
և ուղղման արձանագրության նմուշ

დანართი N14

[არჩევნების დასახელება] [კენჭისყრის თარიღი] ფორმა №1-1.10.12 განკ. /2021

საუბნო საარჩევნო კომისიის მაჟორიტარული საარჩევნო სისტემით კენჭისყრის შედეგების შემაჯამებელი ოქმი

0007 მიმაგრებული უბნების№

№ 112 საარჩევნო ოლქი № 07

საარჩევნო უბანი ☐ გამოკლებითი კენჭისყრა ☐ არჩევნების მოორგანი

| | | |
|---|---|---|
| 1 | ერთიან სიაში ამომრჩეველთა რაოდენობა | 1 1 5 0 |
| 2 | მიღებული საარჩევნო ბიულეტენების რაოდენობა | 1 1 5 0 |
| 3 | სპეციალურ სიაში ამომრჩეველთა რაოდენობა | X X X 7 |
| 4 | არჩევნებში მონაწილე ამომრჩეველთა ხელმოწერების რაოდენობა ყველა სახის ამომრჩეველთა სიაში (ა) 12:00 საათისთვის X 1 0 7 \| (ბ) 17:00 საათისთვის X 3 7 7 | |
| 5 | არჩევნებში მონაწილე ამომრჩეველთა საერთო რაოდენობა | X 5 6 4 |

მიღებულ ხმათა რაოდენობა

| | | |
|---|---|---|
| 111 | საარჩევნო სუბიექტი | X 1 8 7 |
| 112 | საარჩევნო სუბიექტი | X 1 8 7 |
| 113 | საარჩევნო სუბიექტი | X 1 8 7 |

საუბნო
პროპორციული

| | | |
|---|---|---|
| 6 | ბათილად მიჩნეული საარჩევნო ბიულეტენების რაოდენობა (სხვა უბნისათვის განკუთვნილი ბათილი საარჩევნო ბიულეტენების რაოდენობა არ ემატება) | X X X 4 |

თავმჯდომარე ________ / ნინო ნინოშვილი თავმჯდომარის მოადგილე ________ / მამუკა მამაძე

მდივანი ________ / ლალი ლალიაშვილი

წევრები

________ / ლოლა ლოლაძე ________ / ნიკო ალუქიძე ________ / ციური ჯინაშვილი

________ / ნინო ნინიძე ________ / დავით დავითაძე ________ / შალვა შალვაძე

________ / მიხეილ მიხეილიძე ________ / კახა კახიძე ________ / ნაილი ნაყიძე

________ / კახა კახიძე ________ / ელა ამიძე ________ / მანანა ლოლიძე

________ / დათო აბაშიძე ________ / ია იაშვილი

შედგენის თარიღი - "26" 10 2024 წ., დრო: 21 საათი 15 წუთი, კომისიის ბეჭდის ნომერი 11207

| № | ოქმის მონაცემების გრაფა, რომელსაც არ ეთანხმება კომისიის წევრი | კომისიის წევრის სახელი და გვარი | კომისიის წევრის ხელმოწერა |
|---|---|---|---|
| | | | |

განსხვავებული აზრი

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության
և ուղղման  արձանագրության նմուշ

ფორმა №1-1.40.08, გან. №92/2021

№ 112 დიდგორის საარჩევნო ოლქი № 07 საარჩევნო უბანი

საჭირო მონიშვნა: ☒ პროპორციული ☐ მაჟორიტარული ☐ მერი

საუბნო საარჩევნო კომისიის კენჭისყრის შედეგების შემაჯამებელი ოქმის

# შესწორების ოქმი

საქართველოს ორგანული კანონის "საქართველოს საარჩევნო კოდექსი" 70-ე მუხლის მე-4 პუნქტის თანახმად, საუბნო საარჩევნო კომისიის კენჭისყრის შედეგების შემაჯამებელ ოქმში შეტანილია შემდეგი შესწორებები:

| | გრაფა | | ნაცვლად რიცხვისა | უნდა ეწეროს რიცხვი |
|---|---|---|---|---|
| 1 | **ერთიან სიაში** ამომრჩეველთა რაოდენობა | | | |
| 2 | **მიღებული** საარჩევნო ბიულეტენების რაოდენობა | | | |
| 3 | **სპეციალურ სიაში** ამომრჩეველთა რაოდენობა | | | |
| 4 ა | არჩევნებში მონაწილე ამომრჩეველთა რაოდენობა ყველა სახის ამომრჩეველთა სიაში **12:00** საათისთვის | | | |
| 4 ბ | არჩევნებში მონაწილე ამომრჩეველთა რაოდენობა ყველა სახის ამომრჩეველთა სიაში **17:00** საათისთვის | | | |
| 5 | **არჩევნებში მონაწილე** ამომრჩეველთა საერთო რაოდენობა | | 5 6 4 | 5 6 5 |
| მიღებულ ხმათა რაოდენობა | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| 6 | **ბათილად მიჩნეული** საარჩევნო ბიულეტენების რაოდენობა | | | |

შესწორების ოქმი

თავმჯდომარე [signature] / ნინო ნინიძე / (სახელი, გვარი)
თავმჯდომარის მოადგილე [signature] / მამია მამიაძე / (სახელი, გვარი)

მდივანი [signature] / [illegible] / (სახელი, გვარი)

წევრები:

[signature] / ნინო ნინიძე / (სახელი, გვარი)
[signature] / მიმინო მიმინოძე / (სახელი, გვარი)
[signature] / კახა კახიძე / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)

[signature] / ნიკო [illegible] / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)
[signature] / კახა კახიძე / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)

[signature] / [illegible] / (სახელი, გვარი)
[signature] / მამუკა მამუკაძე / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)
[signature] / [illegible] / (სახელი, გვარი)

ბ.ა.

2024 წლის 26 ოქტომბერი, 21 სთ. 25 წთ.

Եթե քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս սխալ է թույլ տրվել հանձնաժողովի հատուկ կնիքի համարը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը/ժամանակը մուտքագրելիս, կամ քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը չի վավերացվել հանձնաժողովի հատուկ կնիքով և նման ձևով տրամադրվել է դրա ֆոտոպատճենը, հանձնաժողովի քարտուղարը պետք է բացատրագիր գրի:

- ☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենները փակցրե՛ք հանրային ծանոթացման համար: Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և ուղղման արձանագրության (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենները, հանձնաժողովի անդամների կցված տարբերվող կարծիքներով (այսպիսինի առկայության դեպքում), պահանջելու դեպքում, անհապաղ փոխանցե՛ք քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց:
- ☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և ուղղման արձանագրության (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճեններ հատկացնելիս (պահանջելու դեպքում)՝ ստորագրե՛ք հանձնաժողովի նախագահի հետ և վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով: Տրված ֆոտոպատճենները գրանցե՛ք գործավարության մատյանում և գրանցամատյանում և ստացող անձին ստորագրությամբ հաստատե՛լ տվեք արձանագրության ֆոտոպատճենը ստանալը:

## Նկատի՛ ունեցեք.

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/անճշտություններն ուղղելու արձանագրության հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի առկայության դեպքում), պահանջի հիման վրա, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հատկացվում են պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

- ☐ Ամփոփիչ արձանագրությունների ֆոտոպատճենները տրամադրելուց հետո փակե՛ք գրանցամատյանը և գործավարության մատյանը: Այդ նպատակով գրանցամատյանում և գործավարության մատյանում վերջին գրառումից հետո արե՛ք մակագրություն «Փակվել է», նշե՛ք ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ճշգրիտ ժամը, գրառումը հանձնաժողովի նախագահի հետ միասին հաստատե՛ք ստորագրությամբ և հանձնաժողովի հատուկ կնիքով:

Գործավարության մատյանը փակելու նմուշ

№ 112 საარჩევნო ოლქი №112.07 საარჩევნო უბანი

შემაჯამებელი ოქმის ფოტოასლის მიღების დადასტურება

| № | სახელი, გვარი | სტატუსი | წარმდგენის (ორგანიზაციის) დასახელება | ხელმოწერა |
|---|---|---|---|---|
| 1 | ნიკა გელაშვილი | ადგილ. დამკვირვებელი | ააიპ „დემოკრატია ქენია" | ნ. გელაშვილი |
| 2 | ნუცა ყორიცაძე | მედია | ტელევიზია „ნათელი მზერა" | ნ. ყორიცაძე |
| 3 | კამილა კაპანაძე | საუბნო წარმომადგენელი | პოლიტიკური პარტია 199 | კ. კაპანაძე |
| | | | | |
| | | | ნ. ნინოშვილი | |
| | | | დ. დავითყლიანი | |
| | | | დახურულია 26.10.2024 22:00 სთ | |

- ☐ Գործավարության մատյանի կապարակնքված փաթեթը ստորագրե՛ք հանձնաժողովի նախագահի հետ: Հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները:

## Դիմում/բողոք ընդունելու և գրանցելու գործընթացում նկատի՛ ունեցեք

- ☐ Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը, տեղական դիտորդական կազմակերպության դիտորդն իրավունք ունի ընտրությունների օրվա դիմումը/բողոքը փոխանցել Ձեզ, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին կամ նրա տեղակալին:
- ☐ Գրանցե՛ք դիմումը/բողոքը գրանցամատյանում և գործավարության մատյանում, իսկ դիմողին/բողոքողին տվե՛ք տեղեկանք (ձեր ստորագրությամբ), որում նշվում է համապատասխան դիմումը/բողոքը հանձնաժողովի կողմից ստանալու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ժամը և գրանցման համարը:
- ☐ Որոշե՛ք դիմումը/բողոքը ներկայացնողի թույլ տված անճշտությունը և խելամիտ ժամկետ սահմանե՛ք դրա լրացման համար, եթե դիմումը/բողոքը չի ներառում.
  - ✓ դիմումը/բողոքը կազմելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը,
  - ✓ դիմումատուի/բողոքաբերի անունը, ազգանունը և հաշվառման վայրը,
  - ✓ ընտրական տեղամասի համարը,
  - ✓ վկայի առկայության դեպքում՝ նրա անունը, ազգանունը և հաշվառման վայրը:

## Նկատի ունեցե՛ք.

Թերությունն ուղղելու ժամկետը սահմանվում է կողմերի համաձայնության հիման վրա: Կողմերի անհամաձայնության դեպքում, ժամկետը միանձնյա սահմանում է դիմումը/բողոքը ընդունող անձը:

- ☐ Դիմումատուն/բողոքաբերն իրավունք ունի սահմանված ժամկետում լրացնել թերությունը համանման դիմում/բողոք ներկայացնելու միջոցով կամ ներկայացնել նոր դիմում (որտեղ կնշվեն այն տվյալները, որոնց պատճառով սահմանվել էր նրա թերությունը): Գրանցամատյանում արե՛ք «Թերություն» գրառումը: Գրառման երկայնքով ստորագրե՛ք Դուք և նաև ստորագրե՛լ տվեք դիմումը/բողոք ներկայացնողին:
- ☐ Թերությունն ուղղելու դեպքում գրանցամատյանում գրե՛ք «Ուղղված է» և նշե՛ք թերությունն ուղղելու ճշգրիտ ժամանակը և ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: Գրառման երկայնքով ստորագրում եք Դուք և դիմում/բողոք ներկայացնող անձը:

  Դիմումի/բողոքի մեջ նշված խախտումը վերացնելու դեպքում քվեարկության օրվա գործավարության մատյանում գրե՛ք «Խախտումը վերացվել է» և նշե՛ք ճշգրիտ ժամանակը:

Գործավարության մատյանի համապատասխան էջի նմուշ

| კენჭისყრის პროცედურების დარღვევის შესახებ განცხადების/საჩივრის რეგისტრაცია | | |
|---|---|---|
| რეგის-ტრაცი-ის № | განცხადების/საჩივრის არსი | განცხადებაზე/საჩივარზე რეაგირება ზუსტი დროის მითითებით (დარღვევა აღმოფხვრილია) |
| 2 | [illegible] | [illegible] 17:00 [illegible] |

## Նկատի՛ ունեցեք

Տեղամասային ընտրական հանձնաժողովը ներկայացված դիմումը/բողոքը չի քննարկում և կարգադրություն է հրապարակում դիմումը/բողոքը առանց քննարկման թողնելու վերաբերյալ, եթե.

- ✓ դիմումը/բողոքը կազմված է ոչ իրավազոր անձի կողմից,
- ✓ դիմումի/բողոքի մեջ չի նշված խախտման էությունը և այն թույլ տալու ժամանակը,
- ✓ դիմումը/բողոքը ներկայացվել է օրենքով պահանջված ժամկետի և կարգի խախտմամբ,
- ✓ սահմանված ժամկետում չի լրացվել ներկայացված դիմումի/բողոքի թերությունը: